

ԿԱՐԾԻՔ

Նաիրա Արայի Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (քիմիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նաիրա Արայի Մանվելյանի ատենախոսությունը նվիրված է մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկին՝ սովորողների արտադասարանական պարապմունքների կազմակերպման ժամանակակից միջոցների, մեթոդների, տեխնոլոգիաների մշակմանը:

Կրթության թվայնացման արդի պահանջների բավարարման տեսանկյունից սույն հետազոտությունը լուծում է երկու կարևորագույն հարց, որը երկար ժամանակ անտեսված է եղել.

- Առաջինը՝ սովորողների ազատ ժամանակի գիտականորեն կազմակերպումն է, որն իր հերթին համարվում է համացանցային կախվածության կանխարգելման լավագույն միջոց, և
- երկրորդ՝ քիմիա առարկայի նկատմամբ նրանց հետաքրքրությունների խթանումն է:

Այս տեսանկյունից քննարկվող ատենախոսությունն արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է, որի նպատակը հանրակրթական հիմնական դպրոցում քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման մեթոդական համակարգի մոդելի և ծրագրի մշակումն ու փորձարարական հիմնավորումն է:

Հետազոտությունը իրականացված է տրամաբանորեն ծրագրավորված պլանով, ունի սոցիալ-մանկավարժական, գիտամեթոդական նշանակություն, քանի որ սովորողների արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման մեթոդական համակարգի մշակման հարցը լուծվում է կարողունակությունների վրա հիմնված, գործունային, սիներգետիկ,

մշակութաբանական, տարբերակվածության ժամանակակից մոտեցումների հայեցակարգային շրջանակներում, ինչը դեռևս խորությամբ չի ուսումնասիրված:

Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, միմյանց լրացնող երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

Հետազոտության արժանահավատությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են տեսական-մեթոդաբանական հիմքը կազմող փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական արդի հայեցակարգերի, մասնագիտական գրականության համալիր վերլուծությամբ, փորձարարական հետազոտության արդյունքներով:

Հետազոտության առաջին գլխում քննարկված են հետազոտության հիմնախնդրին առնչվող մի շարք հիմնահարցեր: Հանգամանալից վերլուծված են հիմնական դպրոցում քիմիայի արտադասարանային պարապմունքների կազմակերպման մեթոդիկայի զարգացման հիմնախնդրի վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումները, տեսություններն ու հայեցակարգերը, որոնց հիման վրա ատենախոսի կողմից նորովի է սահմանվել **«արտաուսումնական գործունեություն»** հասկացությունը, որոշակիացվել և բնութագրվել են քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները, օրինաչափությունները և սկզբունքները, տեսակները, կազմակերպման ձևերն ու մանկավարժական պայմանները:

Այս տեսանկյունից ատենախոսության գիտական արժեքը բարձրանում է նրանով, որ գիտական գրականության մեջ առկա զանգվածային արտադասարանական պարապմունքների թվարկված տեսակներին ավելացվել են քիմիայից սովորողների խմբային նախագծային և հետազոտական աշխատանքները, հատկապես սոցիալական նախագծերը:

Նորովի են մեկնաբանվել **«արտաուսումնական գործունեություն»** և **«արտադասարանական պարապմունք»** հասկացությունները:

Բացահայտվել, լիարժեքացվել և հիմնավորվել են քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման

առանձնահատկությունները, սկզբունքները, օրինաչափությունները, ձևերն ու ուղիները:

Առաջին գլխի վերլուծություններն ուղենիշային նշանակություն ունեն ոչ միայն քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման, այլև քիմիա առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների խթանման, դրդապատճառային ոլորտի խթանման, մասնագիտական նախակարողությունների ձևավորման ու զարգացման տեսանկյունից, սահմանված հասկացությունների էության, կառուցվածքի ընկալման և յուրացման առումով:

Ատենախոսությունը երկրորդ գլխում ներայացված է ատենախոսի կողմից մշակված քիմիայի արտադասարանական պարապմունքների բովանդակությունը և դրա արդյունավետ իրականացման մեթոդական համակարգի մոդելը, որը ներառել է հայեցակարգային, կազմակերպական-գործնական, մեթոդական-տեխնոլոգիական և ակնկալվող վերջնարդյունքային բաղադրիչներն՝ իրենց ենթաբաղադրիչներով և մանկավարժական պայմանները:

Իրականացնելով հետազոտությունը՝ ատենախոսը եկել է այն գիտական համոզմանն, որ քիմիայի արտադասարանական պարապմունքների մեթոդիկայում առարկայի նկատմամբ կայուն հետաքրքրությունների ձևավորման, սովորողների քիմիական գիտելիքների հարստացման, հետազոտական, նախագծային, նախամասնագիտական կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է ներառել ուսուցման ժամանակակից փոխներգործուն մեթոդներ, տեխնոլոգիաներ և տարատեսակ միջոցներ, այդ թվում նաև թվային՝ առաջին հերթին հաշվի առնելով ու գնահատելով քիմիայի ընդհանուր, հատուկ և ուսուցման փոխներգործուն մեթոդների փոխհարաբերակցությունը:

Միևնույն ժամանակ, ելնելով կրթության թվայնացման ժամանակակից ռազմավարական պահանջներից՝ ատենախոսը մշակել և հիմնավորել է քիմիայի արտադասարանական պարապմունքներին **ՏՀՏ** միջոցների կիրառման մոդելը:

Այս հիմնավորման մեջ է ատենախոսության գիտատեսական և գործնական արժեքը, որը նոր խոսք է սովորողների արտադասարանական

պարապմունքների կազմակերպման հիմնախնդրի լուծման գործում:

Առանձնակի գիտական, մեթոդական արժեք են ներկայացնում ատենախոսի կողմից մշակված և առաջարկվող քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման մեթոդները, տեխնոլոգիաները և թվային միջոցները, փորձարարական պարապմունքների ընթացքում իրականացված նախագծային, հետազոտական աշխատանքների նմուշօրինակները:

Հետազոտությունը եզրափակում է ատենախոսի կողմից մշակված քիմիայի արտադասարանական պարապմունքների բովանդակության և դրա արդյունավետ իրականացման մեթոդական համակարգի մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը:

Առաջարկված մեթոդական համակարգի ներդնման արդյունքում քիմիայի արտադասարանական պարապմունքներին սովորողների հետազոտական, նախագծային կարողությունների զարգացման մակարդակի որոշման մեթոդիկան հետաքրքիր և արդյունավետ է տեղեկատվական և դիդակտիկական տեսանկյունից: Արդյունքները համապատասխանում են հետազոտության տրամաբանությանը: Մշակված հարցաթերթիկներն ընդգրկում են, հարցերին տրված պատասխանները հանգամանալից վերլուծվել և համակարգվել են ըստ իմաստային-բովանդակային դրսևորումների:

Տեսական և գործնական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա առանձնացվել են սովորողների քիմիական գիտելիքների յուրացվածության և նախագծային-հետազոտական կարողությունների ձևավորվածությունը բնութագրող չափանիշները, ցուցանիշներն ու մակարդակները:

Ներկայացված տրամագրերը իրականացված քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման տեսական և գործնական հետազոտության վերլուծական-գնահատողական ամփոփումներն են, որոնք արժևորում են հեղինակի եզրակացություններն ու փորձարարության

արդյունքները և մշակված մեթոդիկայի մոդելի մանկավարժական արդյունավետությունը:

Աշխատանքի ընդհանուր արժանիքների թվում պետք է նշել, որ այն տրամաբանորեն ավարտուն է, ինքնուրույն, ամբողջական, համակարգված և պարունակում է հիմնախնդրի շրջանակներում արժեքավոր տեսական վերլուծություններ, ունի գիտական նորույթ, կիրառական նշանակություն:

Հիմնախնդրի ոլորտում ստացվել են գիտամեթոդական հիմնավորված արդյունքներ, որոնք նոր մոտեցումներ են քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման, դրանցում սովորողների գիտելիքների հարստացման կարողունակությունների և 21-րդ դարի հմտությունների արդյունավետ զարգացման առումով:

Ատենախոսությունն արտացոլում է հեղինակի մեթոդաբանական, մասնագիտական, հոգեբանամանկավարժական գիտելիքներն ու գիտահետազոտական կարողությունները, հիմնախնդրի ոլորտում աշխատանքային բազմամյա փորձը:

Ատենախոսի տպագրված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Բարձր գնահատելով կատարած աշխատանքը՝ միաժամանակ կցանկանայինք կատարել որոշ նկատառումներ.

1. Ատենախոսությունը ծանրաբեռնված է սովորողների արտադասարանական պարապմունքների կազմակերպման վերաբերյալ տեսական մոտեցումների վերլուծությամբ, սկզբունքների, ձևերի, տեսակների բնութագրմամբ:

2. Կարծում ենք միանգամայն ավելորդ է ատենախոսության երկրորդ գլխի 2-րդ ենթագլխում բնութագրված միջոցներին ներկայացվող պահանջների, ուսուցման մեթոդների, տեխնոլոգիաների գիտական գրականությունում հայտնի էությունների բնութագրումը, կարելի էր ուղղակի ավելի լիարժեքորեն ներկայացնել պարապմունքներին, օլիմպիական խնդիրների լուծման այդ ժամանակակից փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման օրինակներ:

3. Քիմիայի արտադասարանական պարապմունքի բովանդակության 1-ին տարվա ծրագրում կարելի էր ներառել թեմաներ, որոնց ընդհանարապես ծանոթ չեն սովորողները:

4. Ատենախոսությանում առկա են օտարալեզու բառեր, որոնց հայերեն թարգմանությունները շատ իմաստալից են հնչում, առկա են նաև համակարգչային վրիպակներ:

Իհարկե՛, նշված թերությունները բնավ չեն իջեցնում ատենախոսության գիտատեսական, մեթոդական-գործնական արժեքը. այն գիտական բարձրարժեք հետազոտություն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նաիրա Արայի Մանվեյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ. 00. 02. «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (քիմիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Մանկ.գիտ.դոկտոր

Ա.Մ. Ծատուրյան

Մանկ.գիտ.դոկտոր Ա.Մ. Ծատուրյանի

ստորագրությունը հաստատում եմ՝

ՎՊՀ գիտ.քարտուղար

Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ



Ս.Ս.Բեժանյան